աւարառութեանց մէջ՝ որպէս աւազակապետ: Այսոամենայնիւ նրանք վայելում են ցեղի համակրութ-յունը նոյն չափով, որքան ջերմ էր կրօնական զգացմունքը մի պարզ եւ կիսավայրենի ժողովրդի մէջ, որպէս էր քուրդը:

Տարօնի եւ Վասպուրականի ամբողջ նահանգները բաժանուած էին քրդերի զանազան ցեղերի մէջ: Իսկ իւրաքանչիւր ցեղի մէջ երկրի բաժանմունքը ամենախոշոր մասներից հասնում էր իր ամենափոքր մանրերորդին: Այսինքն, սկսեալ մի գաւառից, մի փոքրիկ վիճակից եւ մինչեւ անգամ մի գիւղից եւ մի ընտանիքից, իւրաքանչիւրն առանձին-առանձին տէրեր ունէին, եւ իւրաքանչիւր բաժինը հաւասարւում էր տիրողի զօրութեան բարձր կամ ստոր աստիճաններին:

Ռայեան — հպատակը, վճարում էր այլեւայլ հարկեր հողի մշակութեան համար, իր անասունների համար, իր արհեստի համար, իր բնակութեան տեղի համար, իր գլխի համար, մի խօսքով, ամէն բանի համար, որ վերաբերում էին նրա կեանքի եւ ապրուստի անհրաժեշտութիւններին: Հարկերի չափը եւ նրանց քանակութիւնը ոչ կշիռ ունէին եւ ոչ սահման. դա կախուած էր առնողի խղճմտանքից: Ռայայի տէր լինելու եւ հարկեր պահանջելու արտօնութիւն վայելողները կոչւում էին խաֆիր կամ դարաբէյիններ: Դրանք ցեղի մէջ որեւիցէ նշանակութիւն ունեցող ազնական մարդիկ էին: Օրինակ, գլխաւոր ցեղապետը ունի իր ազգակիցները կամ պաշտօնակալները, նրանց ապրուստի համար տալիս է մի կամ աւելի գիւղեր, որոնց հասոյթով պէտք է կառավարոեն նրանք. այսպիսիները ստանում են խաֆիրութեան իրաւունք: Նոյնիսկ պաշտօնականները կամ ցեղապետի ազգակիցներն ունեն ծառաներ կամ սպասաւորներ. նրանց ռոճիկի փոխարէն տալիս են իրանց ստացած գիւղերից մի կամ շատ ընտանիքներ որպէս ծուխ, եւ այն ծառան վարւում է նոյն ընտանիքների հետ, որպէս իր սեփականութեան կամ հպատակների հետ: Ահա՛ պատճառը, որ երկրի բաժանմունքը, սկսեալ ամենախոշոր կտորներից, հասնում էր մի ընտանիքի:

Որպէս իշխանութիւնը, սկսեալ ցեղապետից, աստիճանաբար իջնում էր մինչեւ վերջին սպասաւորը, նոյնպէս եւ սեփականութեան իրաւունքը, սկսեալ երկրի խոշոր կտորներից, հասնում էր նրա ամենափոքր մասին:

Բայց երկիրը աղաների (խաֆիրների) տոհմային կամ կալուածական ժառանգութիւնը չէր, այլ նա սեփականացուցած էր սրի ուժով. այս պատճառով, նա անդադար անցնում էր մի տիրապետողից դէպի միւսը, որի սուրն աւելի զօրութիւն էր ստանում:

Եւ այսպէս, պատերազմը տիրողների մէջ դառնում էր մշտական, անընդհատելի: